ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.03.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/21

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝

«Արկանել» ՍՊԸ-ի տնօրեն Կ. Խաչատրյանի (իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից քաղվածք, գրանցման համար՝ 282.110.03338)

«Արկանել» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝

Հ. Քոյլոյանի (լիազորագիր տրված՝ 02.03.2020թ.)

Հայաստանի պատմության թանգարան ՊՈԱԿ-ի լիազորված ներկայացուցիչներ՝

Հ. Սահակյանի (լիազորագիր տրված՝ 28.02.2020թ.)

Ա. Մանուկյանի (լիազորագիր տրված՝ 28.02.2020թ.)

քննելով «Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար «Մշակութային արժեքների (թանկարժեք իրերի) տեղափոխման ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՊԹ-ԳՀԾՁԲ-20/3» ծածկագրով գնանշման

հարցման ընթացակարգի շրջանակներում «Արկանել» ՍՊԸ-ի կողմից 27.02.2020թ. ներկայացված (27.02.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/21 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Արկանել» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Արկանել» ՍՊԸ-ն 27.02.2020թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՊՈԱԿ-ը (հետայսու նաև՝ Պատվիրատու) 21.02.2020 թվականին հայտարարել է «ՀՊԹ-ԳՀԾՁԲ-20/3» ծածկագրով գնանշման հարցում (հետայսու նաև՝ Ընթացակարգ), իր կարիքների համար՝ մշակույթային արժեքների (թանկարժեք իրերի) տեղափոխման ծառայությունների ձեռքբերման նպատակով: Հիմք՝ Պատվիրատուի գնանշման հարցման մասին 21.02.2020 թվականի հայտարարությունը:

Ընթացակարգի շրջանակում աջակցություն ցուցաբերելու և «ԱՐԿԱՆԵԼ» ՍՊ ընկերության (հետայսու նաև՝ Ընկերություն) և «ԷՅՉ ԷՍ ՓԱՐԹՆԵՐՍ» ՍՊԸ-ի միջև 21.02.2020 թվականին կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր՝ Ընթացակարգի շրջանակում մասնակցության աջակցություն ապահովելու և ձեռք բերվող ծառայության տեխնիկական բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ ներկայացնելու համար, որի անանունության ապահովման նպատակով Հայկ Ղազարյանը պետք է գործի իր անունից: Հիմք՝ Ընկերության և «ԷՅՉ ԷՍ ՓԱՐԹՆԵՐՍ» ՍՊԸ-ի միջև 21.02.2020 թվականին կնքված ծառայությունների մատուցման պայմանագիրը:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 3.5 կետի համաձայն՝ Պատվիրատուին էլեկտրոնային փոստի միջոցով սահմանված ժամկետներում ներկայացվել է առաջարկ ընթացակարգի հրավերով սահմանված ծառայությունների մատուցման տեխնիկական բնութագրերում փոփոխություն կատարելու վերաբերյալ, որը մնացել է անարձագանք: Հիմք՝ Հայկ Ղազարյանի կողմից 22.02.2020 թվականին Պատվիրատուի էլեկտրոնային հասցեին ուղարկված հաղորդագրությունը:

Ընկերությունը վկայակոչել է բողոքի հետևյալ փաստական և իրավական հիմնավորումները.

ՀՀ գնումների մասին օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 17-րդ ենթակետի համաձայն՝ գնման առարկայի բնութագիրը՝ գնման առարկայի հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմաններն են:

ՀՀ գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. (...):

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 13-րդ կետի համաձայն՝ պատասխանատու ստորաբաժանման լիազորությունները չեն կարող վերապահվել գնումները համակարգողին: Պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտի նախագծմանը մասնակցող անձը (անձինք) պետք է ունենա (ունենան) գնման

առարկան բնութագրելու մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է՝ ելնելով գնման առարկայի տեսակից:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Կարգի 31-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին ներկայացնել հիմնավորումներ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ առանց նշելու անունը-ազգանունը: Ներկայացված հիմնավորումներն ընդունելի համարվելու դեպքում գնահատող հանձնաժողովը սահմանված ժամկետում դրանցով պայմանավորված փոփոխություններ է կատարում հրավերում

Ընկերությունը նշել է, որ վերոհիշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում պետք է փաստել, որ գնման առարկայի բնութագիրը՝ ի թիվս այլնի, ձեռք բերվող ծառայության ամբողջական և հստակ նկարագիրը պարունակող գնման առարկայի հատկանիշներն է, որը իր հերթին պետք է բացառի տարակերպ մեկնաբանությունները: Նշված օրենսդրական կարգավորումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ելնելով գնման առարկայի առանձնահատկություններից պետք է հնարավորինս հստակ սահմանվեն դրա որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա: Այսինքն եթե ձեռք բերվող ծառայությունը իր բնույթով կրում է այնպիսի առանձնահատկություններ, որոնք լրացուցիչ պայմանների պարզաբանման կամ սահմանման անհրաժեշտություն ունեն, ապա այդ մասին նույնպես պետք է նշվի ձեռք բերվող ծառայության տեխնիկական բնութագրում, որպեսզի դրա կատարման փուլում

հնարավոր լինի հստակ մեկնաբանել կատարման եղանակներն ու պայմանները, ինչպես նաև հնարավոր լինի ապահովել մեկից ավելի մասնակիցների մասնակցության ապահովումը, քանզի ոչ հստակ և ոչ ամբողջական տեխնիկական բնութագրի սահմանումը անուղղակի խոչընդոտներ կստեղծի մասնակիցների համար, որը իր հերթին կբացառի նրանց մասնակցության ցանկությունն ու հնարավորությունը: Նշվածով պայմանավորված Օրենսդիրը սահմանել է գնման հայտի նախագծմանը մասնակցող անձի գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողության ունակության պարտադիր վավերապայման, ինչը պետք է որոշվի ելնելով գնման առարկայի տեսակից, այս նորմի նախատեսումը ոչ թե կրում է ինքնանպատակ բնույթ, այլ պարտադիր վավերապայման վկայակոչված սկզբունքները ապահովելու և տեխնիկական բնութագրի ամբողջական և հստակ սահմանումը ապահովելու համար: Իսկ եթե հրավերի տեխնիկական բնութագրով ամբողջական և հստակ սահմանված չէ ձեռք բերվող ծառայության նկարագիրը, ապա յուրաքանչյուր ոք իրավունք ունի մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին ներկայացնել հիմնավորումներ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ դրանցում փոփոխություն կատարելու նպատակով: Ի դեպ հիմնավորումների ներկայացման համար Օրնսդիրը սահմանել է անանունության հնարավորություն ելնելով օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից:

Նշվածը, համադրելով սույն գործի փաստերի հետ, պետք է արձանագրել հետևյալը՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՊՈԱԿ-ի 21.02.2020 թվականին հայտարարված «ՀՊԹ-ԳՀԾՁԲ-20/3» ծածկագրով՝ իր կարիքների համար՝ մշակույթային արժեքների (թանկարժեք իրերի) տեղափոխման ծառայությունների ձեռքբերման նպատակով գնանշման հարցմամբ սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը «Տեղափոխումը՝ Երևան (Հայաստանի) - Հաագա (Նիդեռլանդներ).

Արկղերի քանակը՝ 2

1. 50 (H) x 218 x 114

2. 74 (H) x 138 x 74

Ընդհանուր քաշը՝ 1200 կգ »:

Վերը նշված տեխնիկական բնութագիրը կազմված չէ այդ ծառայության համար բնութագիր կազմելու ունակ անձանց մասնագիտական եզրակացությամբ և այդ նույն բնութագրով ամբողջական և հստակ նշված չեն հետևյալ անհրաժեշտ պայմանները՝

Փոխադրման ծառայությունները ներառում են զուտ միայն տրանսպորտային միջոցով ա կետից բ կետ բեռի տեղափոխում, թե ներառում են նաև այլ ծառայություններ ևս (օրինակ՝ բեռի ուղեկցում, պահպանում, փաթեթավորում, ապահովագրություն և այլ նմանատիպ ծառայություններ), և եթե այո ապա խնդրում եմ նշել դրանք և նշել թե ում կողմից և ինչ միջոցների հաշվին են դրանք իրականացվելու:

Կատարողի կողմից ինչ վճարներ պետք է արվեն և որտեղ, եթե այդպիսիք առկա են,

ինչ տեսակի տրանսպորտային միջոցով պետք է իրականացվի բեռի տեղափոխումն և ինչ ճանապարով (օդային, ցամաքային, ծովային թե խառը), որ հասցեից պետք է վերցնել բեռը և որ հասցեով հանձնել:

Բեռնումը և բեռնաթափումը պետք է իրականացվի Կատարողի կողմից իր ուժերով և իր միջոցների հաշվին, թե՝ ոչ, և եթե այո, ապա՝ որ վայրերում:

Տեղափոխումը կազմակերպելու համար օրվա որ ժամին է հանձնվելու բեռը Կատարողին, արտահանման համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը տրվելու են բեռի հետ թե՝ ոչ:

Այլ ծառայությունների թերացումները (մաքսային զննումներ, ձևակերպումներ, թույլտվություններ..) որոնք կարող են ազդել տեղափոխման ժամկետի վրա:

Բեռի առաքումը ձևակերպվելու է որպես թանկարժեք բեռ, թե՝ սովորական:

Նշված հանգամանքներով պայմանավորված փոփոխական է ինչպես տեղափոխման ժամկետները, այնպես էլ ծառայության արժեքը: ԵՎ որպեսզի հնարավոր լինի ապահովել անհրաժեշտ կարիքի համար համարժեք հատուցմամբ ծառայության ձեռքբերումը, ինչպես նաև գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսումը, ապա անհրաժեշտ է Ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող ծառայությունների տեխնիկական բնութագրում կատարել վերոգրյալ առաջարկված փոփոխությունները, հստակ սահմանելով դրանց վերաբերյալ տեղեկատվություն: Իսկ եթե տեխնիկական բնութագրով հստակ չսահմանվի վերոգրյալ առաջարկով ներկայացված հիմնավորումները, ապա ոչ ամբողջական տեխնիկական բնութագրով գնման

գործընթացին մասնակիցները՝ հանձինս նաև մեզ զերծ կմնան մասնակցելուց, պայմանագր կատարման փուլում խնդիրների չբախվելու նպատակով:

Հաշվի առնելով նշված 22.01.2020 թվականին վերոգրյալ հիմնավորումները՝ անանուն ներկայացնելու նպատակով Ընկերության և «ԷՅՉ ԷՍ ՓԱՐԹՆԵՐՍ» ՍՊԸ-ի միջև կնքվել է պայմանագիր, ով հենց նույն օրը ի կատարումն պայմանագրի էլեկտրոնային փոստի միջոցով նշված հիմնավորումները ներկայացրել է Պատվիրատուին, որը մնացել է անարձագանք, հիմնավորումները ներկայացվել են մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը:

Ներկայացված բողոքով Ընկերությունը խնդրել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին պարտավորեցնել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՊՈԱԿ-ին 21.02.2020 թվականին հայտարարված «ՀՊԹ-ԳՀԾՁԲ-20/3» ծածկագրով գնանշման հարցման հրավերով ձեռք բերման ենթակա ծառայությունների տեխնիկական բնութագրում կատարել փոփոխություններ՝ ամբողջական և հստակ սահմանելով տեղափոխման եղանակն ու պայմանները (ուղեկցում, ապահովագրություն, փաթեթավորում), ճանապարհը (օդային, ցամաքային, թե՞ ծովային), առաքման և ստացման հասցեները, բեռնաթափման եղանակները, բեռի ձևակերպման եղանակները (սովորական, թե՞ թանկարժեք), տեղափոխման օրը և ժամը, բեռի տեղափոխման ժամանակ արտահանման փաստաթղթերի առկայությունը կամ բացակայությունը և այլ անհրաժեշտ վավերապայմաններ:

«Արկանել» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 03.03.2020թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր և իր ներկայացուցչի մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքը:

<u>2. «Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ-ը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 02.03.2020թ. գրությամբ հայտնել է, որ «Արկանել» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնազուրկ է և ենթակա է մերժման:

Պատվիրատուն նշել է, որ ՀՀ գնումների մասին օրենքի իմաստով գնման առարկայի բնութագիրը գնման առարկայի հատկանիշների, դրանց ձեռքբերման և վճարման պայմանների նկարագրությունն է:

ՀՀ գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Այսպես՝ բողոքաբերը, վկայակոչելով Օրենքից մի շարք դրույթներ, գտել է, որ Պատվիրատուի կողմից գնման առարկայի բնութագիրը բավարար չափով հստակ չէ և չի ներառում իր կողմից բարձրացված թվով 9-ը հարցերի պատասխանները:

Նախքան անդրադառնալը բողոքով բարձրացված հարցադրումներին՝ անհրաժեշտ է նշել, որ բողոքաբերի կողմից 22.02.2020 թվականին ուղարկված հայտի վերաբերյալ պարզաբանման հարցումը Պատվիրատուն չի ստացել՝ տեխնիկական պատճառներով, այնուհանդերձ բանավոր կերպով /հեռախոսազանգի միջոցով/ նշված հարցերին սպառիչ պատասխան է տրվել:

Պատվիրատուն հայտնել է, որ նշված հարցմանը պարզաբանում ներկայացնելու անհրաժեշտություն, ըստ էության, չի եղել, քանի որ Օրենքի 29-րդ հոդվածի երրորդ մասի իմաստով հարցման բովանդակությունը դուրս է եղել հրավերի շրջանակներից՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Բոլոր այն իրավական նորմերը, որոնք վկայակոչված են բողոքում, լիարժեք արտացոլում են Պատվիրատուի գործողությունների իրավաչափությունը, ինչ վերաբերում է դրանց տրված մեկնաբանություններին, ապա մեղմ ասած դրանք որևէ առնչություն չունեն բողոքով բարձրացված հարցերի հետ:

Մասնավորապես՝ ըստ բողոքաբերի վերջինիս պարզ չէ, թե տեղափոխման ընթացքում ինչպիսի այլ ծառայություններ են պահանջվելու մասնակցից: Սույն հարցն ունի պարզ պատասխան, մասնավորապես, այլ ծառայությունների մասին տեղեկատվություն գնման հայտում ներառված չլինելու պայմաններում, բնական է, որ Պատվիրատուն չի ակնկալում դրանց կատարում մասնակցի կողմից, ուստի այս առումով բարձրացված հարցը բովանդազուրկ է:

Նմանօրինակ առարկությունն ընկած է նաև բողոքաբերի կողմից հնչեցված մյուս բոլոր հարցրի հիմքում, այսինքն՝ Պատվիրատուն, ղեկավարվելով Օրենքի 13-րդ հոդվածով, նկարագրել է այն ծառայության հատկանիշները, որի կարիքը վերջինս ունի:

Պետք է նկատել, որ բողոքաբերը, ի թիվս այլնի, որևէ կերպ չի հիմնավորել Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի խախտման փաստը, քանի որ Պատվիրատուի գնման հայտի ուսումնասիրությունից եզրահանգումը տրամագծորեն հակառակն է, մասնավորապես՝ էական չհամարելով տեղափոխման միջոցը Պատվիրատուն ապահովել է մրցակության հավասար պայմաններ, քանի որ նշված ծառայության իրականացումը հնարավոր է համարվել ինչպես օրինակ ցամաքով, այնպես էլ օդային փոխադրմամբ, կամ այլ եղանակով, այսինքն՝ նշված մշակութային արժեքների տեղափոխումը Պատվիրատուն չի պայմանավորել որևէ կոնկրետ միջոցով, ինչով և մրցակցային պայմաններ է ապահովել հնարավոր մասնակիցների համար, այլ կերպ ասած թողնվել է մասնակցի հայեցողությանը:

Միաժամանակ պետք է նկատել, ար Պատվիրատուի կողմից կազմակերպված գնման հայտը կապված է բացառապես տվյալ արժեքների տեղափոխման հետ, այսինքն՝ սույն գնման գործընթացով պատվիրատուն կարիք է ունեցել միայն ապահովել բեռի տեղափոխումը, ուստի այն բնութագիրը, որը ներառվել է գնման հայտում օբյեկտիվորեն հիմնավորված է:

Անդրադառնալով, Օրենքի 13-րդ հոդվածիի չորրորդ մասի իրավակարգավորմանը՝ պետք է արձանագրել, որ այնքանով, որքանով պատվիրատուն կարիք է ունեցել իրականացնել մշակութային արժեքների զուտ տեղափոխում, ուստի այս առումով

տեխնիկական բնութագիրը նաև ճշգրիտ ընկալելի է, քանի որ գնման հայտում ներառված բեռի քանակը, չափերը, տեղափոխման վայրը, քաշը սպառիչ նկարագրված են և բացի այդ ինչպես նկատում ենք բողոքաբերն այս առումով նույնպես որևէ առարկություն չունի:

Վերոգրյալի ամփոփմամբ պետք է փաստել, որ մասնակցի բողոքի հիմքում ընկած և այսպես կոչված պարզաբանման ենթակա հարցերը, ըստ էության, չեն էլ կարող պարզաբանվել, քանի որ դրանք դուրս են հրավերի բովանդակության շրջանակից: Պատվիրատուն նշել, որ մասնակիցն ավելի շատ ցանկանում է բացառման սկզբունքով մասնակցել գնման գործընթացին, ինչը բնավ չի բխում պատվիրատուի կարիքներից, այլ կերպ ասած՝ գնման առարկայի բնութագրում իրավաչափորեն չի ներառվել այնպիսի հատկանիշներ կամ ծառայություններ, որոնք ուղղված չեն Պատվիրատուի կարիքի բավարարմանը, հետևաբար ապահովագրության, փոխադրման և այլնի հետ կապված պայմանների առկայությունը որևէ կերպ չի կարող հանդիսանալ պարտադիր պայման:

Առավել պատկերավոր հասկանալու համար, այն որ մասնակցի ներկայացրած հարցերը բովանդակազուրկ են, կարելի է քննարկել հետևյալ տեսական օրինակները, որոնք ոչնչով չեն տարբերվում վերջինիս կողմից բարձրացված հարցերից, օրինակ՝ մասնակցի համար տեսականորեն կարող է հասկանալի չլինել, թե կցորդիչով հնարավոր է տեղափոխում իրականացնել, թե՝ ոչ, կամ արկղերը, որոնցով պետք է տեղափոխվի բեռը, ինչպիսի մետաղից պետք է լինեն կամ օրինակ՝ պահանջի պարզաբանել, թե արկղերը քանի կիլոգրամ պետք է լինեն և այսպես շարունակ:

Ինչ վերաբերում է բողոքաբերի այն հարցադրմանը, ըստ որի՝ պարզ չէ, թե բեռի առաքումը ձևակերպվել է որպես թանկարժեք թե սովորական բեռ, ապա նշենք, որ գնման հայտի պատշաճ ուսումնասիրման դեպքում վերջինիս մոտ այդ հարցադրումը օբյեկտիվորեն չպետք է առաջանար, քանի որ ծառայության ձեռքբերման գործընթացը կազմակերպվել է բառացիորեն մշակութային արժեքների /թանկարժեք իրերի/ տեղափոխման նպատակով, որպիսի նշումն առկա է գնման հայտում:

Պատվիրատուն գտնում է, որ բողոքաբերի կողմից բարձրացված հարցերը իմաստազուրկ են, դուրս են հրավերի բովանդակության շրջանակից, ուստի նման պայմաններում բողոքը ենթակա է մերժման:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 03.03.2020թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր

ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/21 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2021/21 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար «Մշակութային արժեքների (թանկարժեք իրերի) տեղափոխման ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՊԹ-ԳՀԾՁԲ-20/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերով նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

1	Տեղափոխումը՝ Երևան (Հայաստանի) - Հաագա (Նիդեռլանդներ). Արկղերի քանակը՝ 2 1.50 (H) x 218 x 114 2.74 (H) x 138 x 74 Ընդհանուր քաշը՝ 1200 կգ

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Արկանել» ՍՊԸ-ի կողմից 27.02.2020թ. ներկայացված բողոքը, «ՀՊԹ-ԳՀԾՁԲ-20/3» ծածկագրով ընթացակարգի հրավերը, «Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ-ի 02.03.2020թ. գրությունը, գտնում եմ, որ բողոքն հիմնավոր է և ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. ***Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:***

4. ***Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:***

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Կարգի 25-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին ներկայացնել հիմնավորումներ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ առանց նշելու անունը-ազգանունը: Ներկայացված հիմնավորումներն ընդունելի համարվելու դեպքում գնահատող հանձնաժողովը սահմանված ժամկետում դրանցով պայմանավորված փոփոխություններ է կատարում հրավերում:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «ՀՊԹ-ԳՀԾՁԲ-20/3» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը, գտնում եմ, որ այն չի համապատասխանում գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին, հետևյալ հիմնավորմամբ.

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ գնման ***<u>առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող</u>*** ապրանքի, աշխատանքի կամ ***<u>ծառայության հատկանիշները</u>***, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ ***<u>բացառելով տարակերպ մեկնաբանությունը:</u>***

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց ***հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող*** ապրանքի, աշխատանքի կամ ***ծառայության*** որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, ***փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին,*** նախագծերին, ***ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը:***

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Վերոհիշյալ նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ տեխնիկական բնութագիրը պետք է լինի հնարավորինս հստակ՝ ներառելով գնման առարկայի բոլոր հատկանիշները և միակ պայմանն այն է, որ տեխնիկական բնութագիրը չպետք է պահանջ կամ հղում պարունակի որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց, իսկ հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Դրա հետ մեկտեղ գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն սկզբունքներից է հանդիսանում գնման արդյունավետ և օգտավետ իրականացումը, հետևաբար պատվիրատուի կողմից իրականացվող գնումը պետք է լիարժեք համապատասխանի վերջինիս գնման պահանջին և ապահովվի պատվիրատուի այն կարիքի բավարարումը, որի նպատակով կազմակերպվել է նշված գնումը և միևնույն ժամանակ չհակասի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի և 13-րդ հոդվածների պահանջներին:

Ուսումնասիրելով Ընթացակարգի տեխնիկական բնութագիրը՝ գտնում եմ, որ այն կազմված է թերի մասնավորապես՝

Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով ապրանքի ընդհանուր քաշը նշված է 1200 կգ, մինչդեռ նշված չէ թե բեռը ինչ ապրանքներից է բաղկացած, ինչը

անհրաժեշտ է տվյալ բեռը ԱՏԳ ԱԱ դասակարգչին համապատասխան հայտարարագրելու և մաքսային ձևակերպումներ իրականացնելու համար: Տվյալ դեպքում մաքսային ձևակերպումների ծախսերը կարող են լինել տարբեր՝ կախված բեռի տեսակից: Առավել ևս, երբ հրավերում որպես չափաբաժնի անվանում նշվել է «Մշակութային արժեքների (թանկարժեք իրերի) տեղափոխման ծառայությունների» ձեռքբերում, հետևաբար պետք է նշվի նաև՝ ինչ թանկարժեք իրերից է կազմված բեռը:

Դրա հետ մեկտեղ պետք է նկարագրվի ապրանքի պահպանման պայմանները, քանի որ, կախված բեռի տեսակից, պահպանման պայմանները կարող են լինել տարբեր:

Տեխնիկական բնութագրում առկա չէ նաև ապրանքի ապահովագրված լինելու վերաբերյալ տեղեկատվություն, ապրանքները ապահովագրված չլինելու պարագայում կառաջանա ապահովագրության անհրաժեշտություն, որը և իրենից ներկայացնում է լրացուցիչ ծախս և հանդիսանում է գնագոյացման էական բաղադրիչ:

Բացակայում է տեղեկատվությունն այն մասին, թե ում կողմից պետք է իրականացվի բեռնավորումը և բեռնաթափումը՝ Պատվիրատուի, թե՝ Կատարողի:

Տեխնիկական բնութագրում որպես ապրանքի տեղափոխման վայր նշված է Հագա (Նիդեռլանդներ), բացակայում է հասցեն:

Միաժամանակ բացակայում է տեղեկատվություն այն մասին, թե ինչ ժամկետներում է Պատվիրատուի ներկայացուցիչը տեղափոխման վայրից ստանալու ապրանքը (պահպանման անհրաժեշտություն առկա է, թե՝ ոչ, եթե այո, ապա ով է կրում պահպանման ծախսերը):

Այսպես՝ Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը՝

1) ***պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար***.

2) ***չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.***

Այսպիսով՝ վերը նշված փաստերով պայմանավորված, գտնում եմ, որ Պատվիրատուն մանրամասն և հստակ չի նկարագրել ձեռքբերվող ծառայությունը և դրա գնագոյացման համար հիմք հանդիսացող բաղադրիչները, որով խախտվում է գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Արկանել» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Արկանել» ՍՊԸ-ի կողմից 27.02.2020թ. ներկայացված բողոքը բավարարել. պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին սույն որոշման հիմնավորումների շրջանակներում «ՀՊԹ-ԳՀԾՁԲ-20/3» ծածկագրով գնանշման հարցման հրավերում կատարել համապատասխան փոփոխություններ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**